

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Սիրո Ամիրխանյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Պետության ժողովրդավարական կառուցվածքը ենթադրում է որոշակի ռեժիմի ստեղծում, որի շրջանակներում գործունեություն են իրականացնում պետության, հասարակության և մարդու միջև սերտ կապն ապահովող զանազան կառուցակարգեր, որպիսիսներին են նաև իրավաբանական անձինք: Ընդ որում, իրավաբանական անձանց համակարգը պետք է լինի համապատասխան տվյալ պետության, ինչպես նաև ժողովրդավարական արժեքներ դավանող այլ երկրների իրավական ռեժիմին և իրավունքի համակարգին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև բաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

Ներկայումս շրջանառության մեջ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ իրավաբանական անձանց վերաբերող գլխում փոփոխություններ կատարելու մասին հայեցակարգը¹, որտեղ նշված է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց որպես նոր կատեգորիա հավուր պատշաճի ամրագրելու նպատակն իրագործելու համար մշակվել է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի» նախագիծ², որի հոդված 4-րդով առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածում կատարել փոփոխություններ և սահմանել, որ իրավաբանական անձինք բաժանվում են մասնավոր իրավունքի և հանրային իրավունքի իրավաբանական անձանց:

Թեև հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը բխում է միջազգային պրակտիկայից, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների վերը նշված հայեցակարգում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում ամբողջ ծավալով չեն բացահայտվել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը, հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ գծերը և դրանով պայմանավորված՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնահատկությունները: Այդ իսկ պատճառով, մենք կքննարկենք հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտության հիմնավորման հարցը, որով կփորձենք բացահայտել նաև հանրային իրավունքի իրավա-

¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ, գլուխ 5՝ իրավաբանական անձինք. Հեղ. Ավետիսյան Վ., Սերոբյան Դ., Երևան, 2014թ., էլեկտրոնային ռեսուրս

http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656566421131_lravabanakan_andinq.pdf (վերջին մուտք՝ 21.05.2018):

² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք. Հեղ. Ավետիսյան Վ., Սերոբյան Դ., էլեկտրոնային ռեսուրս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_3463498407311_qax_or_popox-1.pdf (վերջին մուտք 21.05.2018):

բանական անձանց բնորոշ առանձնահատկությունները:

Նշենք, որ ռոմանագերմանական իրավունքի համակարգի երկրները, որոնք ճանաչում են իրավունքի բաժանումը մասնավորի և հանրայինի, սովորաբար տարբերակում են մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանական անձերը: Այս կապակցությամբ Օ.Ա. Յաստրեբովը նշում է, որ «իրավաբանական անձանց բաժանումը հանրայինի և մասնավորի գործնականում բնորոշ է գրեթե բոլոր արտասահմանյան երկրներին, որտեղ առկա է ինչ-որ չափով իրավունքի բաժանում հանրայինի և մասնավորի»¹:

Չնայած այն հանգամանքին, որ իրավաբանական գրականության մեջ իրավունքի բաժանմանը (հանրայինի և մասնավորի) էական նշանակություն չեն տալիս, այդ բաժանումը, իրավաբանական անձանց կարգավորման առումով, պետք է համարել հիմնական և առանցքային:

Հարկ է նշել, որ մասնավոր իրավունք է համարվում այն համակարգը, որը կարգավորում է մասնավոր անձանց միջև առաջացած կամքի ինքնավարության և կողմերի իրավահավասարության սկզբունքների վրա հիմնված հարաբերությունները: Քաղաքացիական իրավունքը մասնավոր իրավունքի մի ճյուղ է, և դրա կարգավորման առարկա են մասնավոր անձանց մասնակցությամբ հարաբերությունները: Հանրային է համարվում իրավունքի այն համակարգը, որը կարգավորում է պետական մարմինների հանրային (պետական) իշխանության իրականացմամբ առաջացած հարաբերությունները²: Ինչպես նշել է Ա. Հայկյանցը, ընդհանուր առմամբ մասնավոր իրավունքը կոչված է պաշտպանելու անձի իրավունքները և շահերը, իսկ հանրային իրավունքը՝ քաղաքական կոլեկտիվի և պետության³:

Իրավունքի բաժանումը հանրայինի և մասնավորի, որը հետխորհրդային երկրներում սկզբունքորեն արդեն ընդունվում է, աստիճանաբար առաջացնում է կազմակերպական կառույցների տարբերակում կախված այն բանից՝ դրանք ստեղծվում են հանրային իրավունքում, թե մասնավոր:

Ներկայումս հանրային իրավունքում (սահմանադրական, վարչական, ֆինանսական, հարկային և այլն) հանդիպում են բավականին շատ կազմակերպական կազմավորումներ, որոնք նույնպես անվանվում են իրավաբանական անձեր, սակայն դրանց հիմնադրումը բացառապես պետության կամ նրա մարմինների իրավասությունն է, և մասնավոր անձանց հասնելի չեն: ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ կենսաթոշակային ֆոնդը, ավանդերի հատուցումը երաշխավորող հիմնադրամը, որոնք նախատեսված են նորմատիվ իրավական ակտերով, չեն տեղավորվում քաղաքացիագետների սահմանած իրավաբանական անձի հասկացության շրջանակներում: Այս իրավաբանական անձանց ստեղծման և գործունեության հարաբերությունները բնույթով մասնավոր-իրավական չեն և չեն կարգավորվում քաղաքացիական օրենսդրության նորմերով: Օրինակ, հնարավոր չէ ՀՀ կենտրոնական բանկի ստեղծումը համարել մասնավոր-իրավական բնույթի ակտ: Այն հիմնադրելու կապակցությամբ քաղաքացիական օրենսդրության դրույթները չեն կիրառվում: ՀՀ Սահմանադրությունը ՀՀ կենտրոնական բանկը չի դասել պետական մարմինների շարքին, սակայն այն իրականացնում է հանրային իրավական գործառույթներ, ունի վարչաիշխանական լիազորություններ և մասնակցում է քաղաքացիաիրավական հարաբերություններին որպես իրավաբանական անձ: «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է»: Հարց է ծագում կենտրոնական բանկը՝ որպես ի-

¹ Ястребов О.А. Некоммерческие организации как субъекты публичного права: Учеб. пособие. — М., 2009. էջ 169:

² St`u Чантурия Л.Л. Введение в общую часть гражданского права. М., Статут. 2006. էջ 34:

³ St`u Айкянц А.М. История развития частного права в Армении, Ереван, 2006, էջ 23:

րավաբանական անձ կազմակերպահրավական ինչ ձև ունի, և պետք է արդյոք նույնացվի այն սովորական իրավաբանական անձանց հետ:

Կենտրոնական բանկի համանմանությամբ մի շարք այլ կազմավորումներ չնայած չեն հիմնադրվում քաղաքացիական օրենսգրքի նորմերի հիման վրա, իրավունք ունեն մասնակցելու քաղաքացիահրավական հարաբերություններին, եթե հիմնադիր փաստաթղթերը չեն արգելում: Այդ հարաբերությունների նկատմամբ տարածվում են քաղաքացիական օրենսգրքի դրույթները, չնայած դրանց մասնակցում են հանրային-իրավական կազմավորումներ: Հենց այդ վերջիններս պետք է անվանվեն *«հանրային իրավունքի իրավաբանական անձեր»*:

Ընդ որում Ե. Ա. Սուխանովը նշել է, որ «պետք է հաշվի առնել, որ «հանրային իրավունքի իրավաբանական անձ» տերմինը պայմանական է: Դրա բառացի մեկնաբանությունից կարծես թե ենթադրվում է, որ խոսքը ոչ թե քաղաքացիական, այլ հանրային-իրավական հարաբերությունների մասնակիցների մասին է: Բայց եթե այդպես լիներ, ոչ մի խնդիր էլ չէր առաջանա, կամ խոսք կլիներ քաղաքացիական (մասնավոր) իրավունքի առարկայի մեջ չմտնող սուբյեկտների մասին: Բանը հենց այն է, որ այդպիսի կազմակերպությունները դառնում են քաղաքացիական շրջանառության ինքնուրույն մասնակիցներ, ուստի՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ, այլ ոչ թե հանրային: Սովորական «մասնավոր իրավունքի իրավաբանական անձանցից» դրանք տարբերվում են նրանով, որ հիմնադրվում են քաղաքացիական իրավահարաբերություններից դուրս, հանրային-իրավական կարգավորման հիման վրա և դրա շրջանակներում, և նրանց ինքնուրույն իրավասուբյեկտության ճանաչման նպատակն է հնարավոր դարձնել դրա մասնակցությունը հենց քաղաքացիական իրավահարաբերություններին, քանի որ հանրային-իրավական հարաբերությունների մասնակից ճանաչվելու համար հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ ընդհանրապես պետք չէ»¹:

Թերևս պետք է նշել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնացման հարցի շուրջ միանշանակ կարծիք չկա. կան ինչպես այս գաղափարի կողմնակիցներ, այնպես էլ դեմ հանդես եկողներ:

Որպես այսպիսի անձանց առանձնացման հակափաստարկ, որը հիմնավորում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին քաղաքացիական օրենսգրքում դրույթներ ներառելու ոչ նպատակահարմարությունը, սովորաբար նշվում է այն, որ «իրավաբանական անձը» համարվում է բացառապես քաղաքացիահրավական² հասկացություն, իսկ հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակը կարող է նշանակություն ունենալ միայն հանրային իրավունքի որոշ սուբյեկտներին գույքային հարաբերություններում որոշակի մասնակցության հնարավորություն ընձեռելու դեպքում, որոնք կարգավորվում են մասնավոր (քաղաքացիական) իրավունքով, որը դրանք այդ պահին առանց այն էլ ունեն: Այլ իրավաբանական անձանցից դրանք տարբերվում են միայն նրանով, որ ստեղծվել են հանրային-իրավական կարգավորման ոլորտում, որը չի ազդում քաղաքացիական շրջանառության մեջ դրանց մասնակցության սկզբունքների վրա³:

Սակայն պետք է նշել, որ արդեն իսկ մի շարք իրավաբանական անձեր ներկայումս հիմնադրվում են ոչ թե քաղաքացիական, այլ մասնավորապես նաև հանրային

¹ Տե՛ս **Е. А. Суханов**, О юридических лицах публичного права, էլեկտրոնային ռեսուրս <http://www.justicemaker.ru/view-article.php?id=4&art=2494> (վերջին մուտք՝ 10.04.2017):

² Համաձայն «քաղաքացիական» մոտեցման՝ իրավաբանական անձը զուտ ճյուղային հասկացություն է, քաղաքացիական իրավունքի կատեգորիա, կառուցակարգ, որը հիմնադրվում է բացառապես քաղաքացիական շրջանառությունը սպասարկելու համար:

³ Տե՛ս, օրինակ, **Литовкин В., Суханов Е., Чубаров В.** Право собственности: актуальные проблемы, Институт законодательства и сравнительного правоведения. Изд-во Статут, Москва, 2008г., էջ 295-296; **Болдырев В.** О «юридических лицах» публичного права.// Журнал российского права, № 11. Изд-во Норма, Москва, 2008г., էջ 132-134:

իրավունքի նորմերի հիման վրա, որից ակնայտ է դառնում, որ իրավաբանական անձ հասկացությունը գործածական է նաև հանրային իրավունքի ճյուղերի համար: Բացի այդ, ժամանակակից գրականության մեջ արդարացիորեն գնալով ավելանում են իրավաբանական անձի հասկացության ընկալման մեկ այլ մոտեցման կողմնակիցները, որը կարելի է անվանել «ընդհանուր իրավական» կամ «միջձյուղային»: Այդ մոտեցումը հիմնավորում է, որ իրավաբանական անձի պատմական զարգացումը նախ և առաջ կապված է հանրային իրավունքի հետ, ունի ինչ հռոմեական ծագում¹: Բացի այդ, իրավաբանական գրականության մեջ իրավաբանական անձ հասկացությունը քննարկվում է որպես ընդհանուր իրավական կատեգորիա², և կարծում ենք՝ այն հանգամանքը, որ արտասահմանյան մի շարք երկրներ առանձնացրել են հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձերը որպես իրավաբանական անձանց տեսակներ, ապացուցում է վերը նշված պնդումները:

Բացի այդ, ներկայումս գործունեությունն են ծավալում մի շարք իրավաբանական անձեր, որոնք չեն տեղավորվում և չեն կարող տեղավորվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի սահմաններում, և կան մի շարք հանրային իրավական կազմավորումներ, որոնց իրավական կարգավիճակը պարզ չէ, կամ նրանց տրված է արհեստածին իրավական կարգավիճակ, իսկ հանրային իրավունքի իրավաբանական անձի կառուցակարգը կոչված է կարգավորելու այս խնդիրը: Օրինակ, որոշ դեպքերում այն իրավակարգավորումները, որ պետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով, մեկնաբանվում են բոլորովին անսպասելի ձևով, այդ թվում՝ որ հանրային իրավաբանական կազմակերպությունների նկատմամբ զուտ կիրառվում են իրավաբանական անձանց վերաբերող կարգավորումները, բայց նրանք այդպիսին չեն, քանի որ ունեն գիտությանը անհայտ, այսպես կոչված՝ «քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտի» կամ «քաղաքացիական շրջանառության հատուկ մասնակիցների» կարգավիճակ³: Սակայն, կարծում ենք, այդպիսի պնդման անկայունությունը հիմնավորվում է նրանով, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների այլ՝ «երրորդ տարատեսակ», բացի ֆիզիկական և իրավաբանական անձանցից, գոյություն ունենալ չի կարող այն պատճառով, որ իրավաբանական անձանց վերաբերող նորմերը տարածելով հանրային իրավական կազմավորումների նկատմամբ՝ օրենսդիրը հենց դրանով հավասարեցնում է դրանց իրավաբանական անձանց, չնայած և ճանաչում է, որ այդ սուբյեկտների բնույթը ինքնին հնարավորություն չի տալիս նրանց վրա տարածել իրավաբանական անձանց վերաբերող բոլոր նորմերը:

Հանրային իրավունքի իրավաբանական անձի գաղափարի ընդօրինակումը թույլ կտա վերացնել այն անորոշությունը, որը կապված է «սուբյեկտ (կազմակերպություններ, հանրային իրավական կազմավորումներ, պետական մարմին) իրավաբանական անձի իրավունքներով» կամ «ունի իրավաբանական անձի իրավունքներ» գործող կառուցակարգի հետ: Ե՛վ խորհրդային ժամանակաշրջանում, և՛ ներկայումս որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիայի այլընտրանք կիրառվում են վերը նշված կառուցակարգերը: Սակայն իրավաբանա-

¹ Տե՛ս **Ястребов О.А.** Юридическое лицо публичного права: сравнительно-правовое исследование: диссертация на соискание ученой степени доктора юридических наук М., 2010. էջեր 47-48.

² Տե՛ս օրինակ, **Косякова Н.И.** Юридические лица и межотраслевые связи// Предпринимательское право. 2008. №4. էջ 22.

³ Տե՛ս **Гражданское право: учебник / под ред. Ю. К. Толстого, А. П. Сергеева. М., 1996. էջ 154; Гражданское право: учебник / отв. ред. Е. А. Суханов. 2-е изд. Т. I. М., 2002. էջ 282—283.**

կան անձի իրավունքներ ունենալը և իրավաբանական անձ չհանդիսանալը ներքին հակասություն են: Այս համատեքստում Վ. Ե. Չիրկինը արդարացիորեն նշում է, որ դժվար թե կարելի է միաժամանակ լինել և չլինել, ունենալ և չունենալ, ինչպես չի կարելի լինել մի քիչ հղի¹:

Արտասահմանյան իրավակարգերում այս բնույթի հանրային կազմավորումները առանձնցվում են որպես հանրային իրավունքի իրավաբանական անձեր: Օրինակ՝ Արգենտինայի ՔՕ հոդված 33-ում², Բրազիլիայի ՔՕ հոդված 41-ում³, Գվատեմալայի ՔՕ հոդված 15-ում⁴ (դրանք կոչվում են նաև հանրային իրավունքի կորպորացիաներ), Մոլդովայի ՔՕ հոդված 58-ում⁵ և այլն:

Հանրային իրավունքի իրավաբանական անձանց օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտության դիրքորոշման կողմնակիցները համապատասխան սուբյեկտներին դիտարկում են ոչ միայն որպես մասնավոր-իրավական, այլև որպես հանրային-իրավական հաստատություններ, որոնց նշանակությունը բնավ էլ քաղաքացիական շրջանառությանը մասնակցելը չէ, ավելին՝ քաղաքացիական ճանաչողական նորմերը դրանց նկատմամբ գործում են խիստ սահմանափակ և այնքանով, որքանով չեն հակասում հատուկ դրանց ստեղծման համար հիմք հանդիսացած իրավական ակտերին⁶:

Ա. Յա. Կուրբանովը գտնում է, որ քաղաքացիական օրենսգրքում այն իրավաբանական անձինք, որոնք դասվում են ոչ առևտրային և ոչ կորպորատիվ կազմակերպությունների շարքին, պետք է ամրագրվեն նոր կազմակերպիչական ձևով, որով պետք է առանձնանան այն իրավաբանական անձինք, որոնք հիմնադրում է Ռուսաստանի Ղաշնությունը, և կատարում են հանրային որոշակի գործառույթներ պետական իշխանության մարմինների հսկողությամբ: Հեղինակի կարծիքով, այս անձանց կարելի է բնորոշել որպես հանրային իրավունքի իրավաբանական անձեր⁷:

Հայրենական գիտնականների, մասնավորապես Վ. Ավետիսյանի ուսումնասիրություններում ևս կան դիրքորոշումներ առ այն, որ հարկ է տարանջատել հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց⁸:

Թերևս պետք է նշել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնացման անհրաժեշտությունը ՀՀ-ում պայմանավորված է նախ և առաջ սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի փոփոխություններով: Սահմանադրության 180 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ համայնքը հանրային իրա-

¹ St`u Чиркин В.Е. Субъекты конституционного права в частноправовых отношениях// Журнал российского права. 2007. № 2.

² St`u Código Civil de la Republica Argentina, էլեկտրոնային ռեսուրս՝ http://www.oas.org/DIL/ESP/Codigo_Civil_de_la_Republica_Argentina.pdf (վերջին մուտք՝ 15.12.2018)

³ St`u Código Civil Brasileiro. Lei 10.406 de 10 de Janeiro de 2002 էլեկտրոնային ռեսուրս http://www.planalto.gov.br/ccivil_03/LEIS/2002/L10406.htm (վերջին մուտք՝ 15.12.2018)

⁴ St`u Código Civil de Guatemala. Dto. 106 14.09.1963. էլեկտրոնային ռեսուրս <http://www.scribd.com/doc/2532415/codigo-civil-guatemala> (վերջին մուտք՝ 10.12.2018)

⁵ St`u Гражданский кодекс Республики Молдова, էլեկտրոնային ռեսուրս՝ <http://lex.justice.md/ru/325085/> (վերջին մուտք՝ 15.12.2018):

⁶ St`u, օրինակ, Тысенко Е. Административная ответственность воинской части как юридического лица публичного права и ее должностных лиц.// Административное и муниципальное право, № 10. Изд-во НБ-Медия, Москва 2008г. էջ 65; Баженова О. Органы местного самоуправления как юридические лица: проблемы реализации законодательной концепции.// Муниципальная служба: правовые вопросы, № 2. Изд-во Юрист, Москва, 2008г, էջ 2-5:

⁷ St`u Курбатов А.Я. Реформа гражданского законодательства: чего ожидать юридическим лицам публичного права? // Legal Insight. 2011. № 0 (1).

⁸ St`u Аветисян В. Актуальные проблемы корпоративных правоотношений в Республике Армения (на примере хозяйственных обществ), ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 49:

վունքի իրավաբանական անձ է: Նույնպիսի իրավական կարգավիճակ է տրված նաև միջհամայնքային միավորմանը համաձայն Սահմանադրության 189 հոդվածի 3-րդ մասի: Փաստացի ՀՀ օրենսդրությունը դե ֆակտո ճանաչում է հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան որպես իրավաբանական անձի տեսակ: Թե ինչ է հանրային իրավունքի իրավաբանական անձը, ինչպես է հարաբերվում մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ, արդյո՞ք այդ անձինք ընդամենը երկուսն են, թե՞ առնվազն երկուսն են, Սահմանադրությունում չի բացահայտվում այս հարցերի պատասխանները, և կարծում ենք՝ նման հարցերի կարգավորումը Սահմանադրության շրջանակներում կլինեք առարկայազուրկ: Այնուամենայնիվ, վերը նշված հարցերի պատասխանները պետք է արտացոլվեն օրենսդրության մեջ՝ առաջին հերթին դեկլարավելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված հանրաժանոթ հասկացություններ կամ տերմիններ: Եթե նորմատիվ իրավական ակտում օգտագործվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, կամ այլ նորմատիվ ակտով տրված է այդ հասկացությունների կամ տերմինների այլ սահմանում, ապա տվյալ ակտով տրվում են այդ ակտի էությունից բխող դրանց սահմանումները: Սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը:

Կարծում ենք՝ ներկայումս չկա խոչընդոտ, որ ՀՀ օրենսդրությունը դե յուրե փոխառի հանրային իրավունքի իրավաբանական անձանց կառուցակարգը՝ նպատակ ունենալով կանոնակարգել այն իրավաբանական անձանց իրավական վիճակը, որոնք ներկայումս չեն տեղավորվում քաղաքացիագետների մշակած իրավաբանական անձի հասկացության շրջանակներում, ինչպես նաև ավելի որոշակի բնորոշել իրավաբանական անձանց քաղաքացիական կարգավիճակը, որոնք իրականացնում են պետական և մունիցիպալ գույքի կառավարման գործառնություններ: Սրա հետ միասին անհրաժեշտ է համաձայնել Ե. Ա. Սուլխանովի հետ այն հարցում, որ «մեր կողմից քննարկվող կատեգորիայի ամրագրումը օրենսդրության մեջ չպետք է դառնա հերթական ուղղակի փոփոխություն, որը բովանդակային առումով որևէ բան չի փոխում»¹:

Մեր գնահատմամբ, իրավաբանական անձի ինստիտուտից հանրային իրավունքի իրավաբանական անձի ինստիտուտը տարանջատելիս պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

1. Նախ և առաջ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնացման անհրաժեշտությունը կարելի է պայմանավորել այն բանով, որ անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել Եվրոպայի խորհրդի և Եվրոպական Միության անդամ երկրների իրավական համակարգերին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական Դատարանի իրավական ակտերում ամրագրված իրավական դիրքորոշումների պահանջներին,

2. Հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան պետք է մշակվի այնպես, որ նրա միջոցով հնարավոր լինի լուծել ներկայումս գոյություն ունեցող իրավական, այդ թվում՝ դոկտրինալ խնդիրները: Օրինակ, ներկայումս հնարավոր չէ իրավաբանական անձի քաղաքացիաիրավական հասկացության շրջանակներում պարզաբանել որոշ հանրային-իրավական կազմավորումների և հանրային իշխանության մարմինների կարգավիճակը: Հանրային իրավունքի իրավաբանական անձի տեսությունը ունի ուղղակի կապ պետության և այլ հանրային-իրավական կազմավորումների մասնակցությունը քաղաքացիական շրջանառությանը հարցի հետ և հետևաբար պետք է նպաստի նաև այս ոլորտի հարաբերությունների իրավական կարգավորմանը, լուծի դրանում առկա խնդիրները,

¹ St`u Суханов Е.А. О юридических лицах публичного права. էջ 98:

3. Կարծում ենք՝ հանրային իրավունքի իրավաբանական անձը իրավաբանական անձանց համակարգում պետք է դառնա նոր կազմակերպահրավական ձև, որի սահմաններում իրենց ամրագրումը կստանան կազմակերպությունները, որոնք հիմնադրում են հանրային իրավական կազմավորումները, որոնք ունեն հանրային գործառույթն են, և նրանց գործունեության հիմնական նպատակն է հանրային, հասարակական շահերի բավարումը,

4. Հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիայի փոխառումը թույլ կտա հնարավորինս միասնականեցնել քաղաքացիական շրջանառության այն բոլոր իրավաբանական անձանց գործունեությունը, որոնք հիմնադրում են հանրային իրավական կազմավորումները, հնարավորինս միակերպ լուծել շուկայի մասակիցների համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են քննարկվող սուբյեկտների՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և նրանց քաղաքացիահրավական պատասխանատվության առանձնահատկությունները:

НЕОБХОДИМОСТЬ РАЗГРАНИЧЕНИЯ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ ЧАСТНОГО И ПУБЛИЧНОГО ПРАВА

Сиро Амирханян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

Статья посвящена проблеме юридического лица публичного права и его разграничению от юридических лиц частного права. Проведено исследование аргументов «за» и «против» существования категории «юридическое лица публичного права» и разграничении от юридических лиц частного права. В результате следует вывод о том, что на современном этапе развития юриспруденции это конструкция уже принятая, должно носить всеобъемлющий характер и представляет огромную важность для права Армении и призвана решить ряд взаимосвязанных проблем.

THE NECESSITY TO DISTINGUISH LEGAL ENTITIES OF PRIVATE AND PUBLIC LAW

Siro Amirkhanyan

PhD student of the YSU Chair of Civil Law

The article is devoted to the problem of a legal entity under public law and its separation from legal entities of private law. A study was made of the research of arguments “for” and “against” the existence of the category “legal entity of public law” and separation from the legal entities of private law. As a result, it is concluded that at the present stage of development of jurisprudence, this structure has already been adopted, it is comprehensive and has great importance for the right of Armenia and is designed to solve a number of interconnected problems.

Բանալի բառեր- իրավաբանական անձ, մասնավոր իրավունք, հանրային իրավունք, հանրային իրավունքի իրավաբանական անձ, մասնավոր իրավունքի իրավաբանական անձ, հանրային իրավաբանական անձ

Ключевые слова: юридическое лицо, частное право, публичное право, юридическое лицо публичного права, юридическое частного права, публичное юридическое лицо

Key words: legal person, private law, public law, legal entity of public law, legal entity of private law, public legal entity